ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

**Ծաղկաձորի համայնքապետարանը** ստորև ներկայացնում է իր կարիքների համար **ավտոմեքենաների ընթացիկ վերանորոգման՝ տեխնիկական սպասարկման ծառայության** ձեռքբերման նպատակով կազմակերպված **<<ԾՔ-ԳՀԾՁԲ-20/20>>** ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2021 թվականի հունվարի 29-ին** կնքված N **<<ԾՔ-ԳՀԾՁԲ-20/20-2>>** պայմանագրում **2021 թվականի փետրվարի 18-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ ծառայությունների մատուցումն իրականացվելու է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու և կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքվելու դեպքում:

Փոփոխության նկարագրություն: Ծառայությունների մատուցման իրականացվելու նպատակով նախատեսվել են համապատասխան ֆինանսական միջոցներ և կողմերի միջև կնքվել է համապատասխան համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում: Համապատասխան ֆինանսական միջոցների առկայություն, Պայմանագրի 7.5 և 7.15 կետեր :

***Պատվիրատու՝ Ծաղկաձորի համայնքապետարան***